

միլիոն ֆրանգ զոհել, չհաւանեցաւ. ան ատեն Պ. Պուդէ թողլով ասիկայ՝ ուրիշ առաջարկութիւն մը ըրաւ :

Ըստ երկրորդ առաջարկութեան՝ կամուրջը փոխանակ մէկ միջոցի վրայ երկննալու՝ ինը միջոցի վրայ պիտի երկննայ : Հիւսկէն գործուածին տեղ՝ ծովուն յատակը բանի պիտի բերէ, և սիւները փոխանակ առ ժամանակեայ ընելու, մշտամնայ պիտի ըլլան :

Համարինք թէ կամուրջը այս կերպով յաջողութեամբ շինուի, արդեօք պիտի ունենայ բաւական ամրութիւն, և կամ այն ընդարձակութեան մէջ կարելի չէ որ կամուրջը տեղիք տայ :

Կամուրջին ընդարձակութիւնը, կ'ըսէ Պ. Պուդէ, իր հաստատութեանը վրայ ամենևին վախ պէտք չէ որ ձգէ. և դարձեալ թէ կամուրջը պիտի զգայ տրկարութիւն մը, բայց ոչ արտաքին ազդեցութիւններէ պատճառեալ. և այս տկարութիւնը մէկ անգամ մը միայն և ան ալ իսկզբան. այսինքն ամեն մէկ միջոց՝ իսկզբան 11 մեդր տեղիք տալէն ետքը, կամուրջը իբրև մէկ ժայռ մը անշարժ պիտի մնայ. երկրորդ առաջարկութեան ծախքն է 150 միլիոն ֆր :

Պ. Պուդէի փափագն է ընկերութիւն մը հաստատել 100,000 ֆրանգի գլխով մը, և յանձնել անոր որ իրեն զրութեանը հետեւելով այս կամ այն գետին վրայ մէկ միջոցով կամուրջ մը ձգէ. որուն յաջողիլը կամ չյաջողիլը հաստատէ և կամ մերժէ իր զրութիւնը :

Ինչպէս առաջ ալ ըսինք՝ Պլան-Նէ հրուանդանը պիտի ըլլայ Գաղղիոյ մէջ կամրջախելքին տեղը, որ ծովէն 135 մեդր բարձր է. առաջ կրի-Նէ հրուանդանը որոշուած էր և այս որոշմունքը աւելի բնական էր, վասն զի նեղուցին ամենէն կարճագոյն տեղը (29 հազար մեդր) ճիշդ կրի-Նէի և Շէքսքիլ-Քլիֆի կամ Տուվրի ամրոցին մէջտեղը կ'ըլլայ : Բայց ետքը մտածելով որ այսպէս Քալէի նաւահանգիստը գրեթէ կ'ոչնչանայ, վասն զի Քալէն հրուանդանէն քսան հազարամեդր հեռու կը

մնայ, Պ. Պուդէ որոշեց որ Պլան-Նէ ըլլայ կամրջախելքը, վասն զի ան ատեն Քալէէն 8 հազարամեդր հեռու կ'ըլլայ : Գրեթէ հրուանդանին ստորոտն է Սանկադ աւանը, Քալէէն 5 1/2 հազարամեդր հեռու. կարևոր է և միանգամայն դիւրին այս երկու կէտերուն, այսինքն Քալէի և Սանկադին մէջ մեծամեծ աւազաններ փորել, և նաւահանգիստ մը շինել բոլոր ազգաց նաւերուն համար, և ամբարանոցներ շինել. աւանն ալ քաղաքին հետ միացընել մէկ մեծ աղեղով մը, որ նաև նաւահանգիստն ալ չընկալատէ. և վերջապէս Քալէէն մինչև Պլան-Նէ հրուանդանը՝ վաճառականութեան կեդրոն ընել : Այս կերպով, Գաղղիայէն Անգղիա ձգուած կամրջին պատճառաւ, անցողարձը անհամեմատ կերպով յաճախելով՝ Քալէն մեծ յարգ և մեծ անուն կը ստանայ. և մի և նոյն ատեն մօտակայ քաղաքացի վրայ ալ իր ազդեցութիւնը պիտի ընէ :

Ահաւասիկ փոքրիկ զաղափար մը Պ. Պուդէի Գաղղիան Անգղիոյ հետ միացընելու մտածութեանը : Բայց թէ առաջարկութիւնս մտադրութեան արժանի է թէ ոչ, և կամ թէ լոկ ցնորք մ' է, մենք այս նոր զրութեանս հիմունքը ըստ բաւականի բացատրելէն ետքը՝ կը թողունք որ ժամանակը այս հարցմանց պատասխանները տայ :

Ամեն որ անսխալ և տղնուութեամբ լի գըլուխ-գործոցներ տեսնելով՝ անշնորհ և անհանձար միտքերն ալ անոնց մէջ կը կրթուին, ու գեղեցկին՝ վայելուչին և շնորհալոյն ախորժը կը ստանան. կը վարժին ըմբռնել թէ արուեստի և բնութեան գործերուն մէջ որն է գեղեցկին ու որն է պակասաւորը, և այս ցանկալի իրաւախոհ գաղափարը սովորական կ'ըլլայ իրենց հոգւոյն :

ՊԼԱՏՈՆ

Մասնաւորաց շահը միշտ հասարակաց շահուն մէջն է. անկից զատուիլ ուզելը՝ կորսնցնել ուզել է. ուրիշի համար արդարութիւն եղածը՝ մեզի համար բարեբարութիւն է :

ՄՈՆԴԵՍԹԻՆՅՈՅ